

## «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

Երեւան, 07 մարտի, 2011 թ.

### Մամուլի հաղորդագրություն

#### Հայաստանն ըստ «2011թ. Զբոսաշրջության մրցունակության գեկույցի» զբոսաշրջության մրցունակությամբ 90-րդն է 139 երկրների շարքում

Ըստ Զբոսաշրջության մրցունակության համաթվի Հայաստանի դիրքը 1 տեղով բարձրացել է 2009 թվականի հետ համեմատած: Հայաստանը չորրորդ անգամն է, ինչ ներգրավվում է Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրատարակվող Զբոսաշրջության մրցունակության գեկույցում: Զբոսաշրջության ոլորտում աշխարհի ամենամրցունակ երկիրների ցանկը այս տարի, գլխավորում են Շվեյցարիան, Գերմանիան և Ֆրանսիան: Մրցունակությամբ ամենաթույլ երկրներն են Չադը, Անգոլան և Բուրունդին:

#### Զբոսաշրջության մրցունակության համաթիվ


Զբոսաշրջության մրցունակության համաթիվը, որը համակողմանիորեն գնահատում է երկրների մրցունակությունը զբոսաշրջության բնագավառում, բաղկացած է 3 ենթահամաթվերից, որոնք հաշվարկվում են 14 հենասյուների գնահատականների հիման վրա:

#### Զբոսաշրջության մրցունակության համաթիվ




Հայաստանի արդյունքներն ըստ ենթահամաթվերի

**Զբոսաշրջության կանոնակարգող դաշտ**



Այս ենթահամաթվի առումով Հայաստանի դիրքը մնացել է անփոփոխ (58-րդ տեղ)։ Հայաստանում վիճակը բավականին բարվոք է ապահովության եւ անվտանգության, ինչպես նաև սանիտարահիգիենիկ պայմանների եւ առողջապահության առումով, սակայն դեռեւս լուրջ խնդիր է շրջակա միջավայրի պաշտպանությունը։ Հայաստանի դիրքի վրա բացասաբար են ազդել շրջակա միջավայրի օրենսդրության խստության եւ կիրառման ցածր մակարդակը (120 եւ 126-րդ տեղեր), վիզայի պահանջները (126-րդ տեղ), շրջակա միջավայրին վերաբերող կոնվենցիաներին մասնակցության սահմանափակությունը (108-րդ տեղ), ոստիկանության վստահելիության ցածր աստիճանը (112-րդ տեղ) եւ օդային հաղորդակցության բնագավառում երկկողմ համաձայնագրերի սահմանափակ քանակը (91-րդ տեղ)։ Էական բարելավում է արձանագրվել պետական քաղաքականության թափանցիկության բարձրացման ցուցանիշով (103-րդից 53-րդ տեղ)։

**Զբոսաշրջության բիզնես միջավայր եւ ենթակառուցվածք**




Հայաստանի դիրքը զբոսաշրջության բիզնես միջավայրի եւ ենթակառուցվածքի ենթահամաթվի առումով բարելավվել է 5 տեղով։ Դրան էապես նպաստել է զբոսաշրջության ենթակառուցվածքների հենասյուների գնահատականների բարելավումը։ Ըստ զեկույցի՝ բիզնես միջավայրի եւ ենթակառուցվածքի առումով Հայաստանի միակ առավելությունն է զբոսաշրջության ոլորտի գնային մրցունակությունը, որը սակայն նվազել է նախորդ տարվա համեմատ։ Հայաստանը էապես զիջել է դիրքերը հյուրանոցների գների (64-րդից 82-րդ տեղ)

վերգետնյա ճանապարհային ցանցի որակի (60-րդից 81-րդ տեղ) համաթվերի տեսանկյունից: Ուշագրավ բարելավումներից է մեքենաների վարձույթով զբաղվող միջազգային հայտնի ընկերությունների ներկայության համաթվի աճը (95-րդից 80-րդ տեղ):

Հայաստանն այլ երկրներին զիջում է տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ցածր մակարդակի առումով: Օդային եւ վերգետնյա տրանսպորտի ենթակառուցվածքը, թեւս գրանցել է որոշակի առաջընթաց նախորդ տարվա համեմատ, սակայն հանդիսանում են Հայաստանի հիմնական մրցակցային թերություններից:

**Զբոսաշրջության մարդկային, մշակութային եւ բնական ռեսուրսներ**



Այս ենթահամաթվի առումով Հայաստանի դիրքը նվազել է 5 տեղով: Հայաստանի մրցակցային առավելություններից է բնակչության բաց եւ բարեհամբույր վերաբերմունքն օտարերկրյա այցելուների նկատմամբ (զբոսաշրջության հանդեպ բացության համաթվով Հայաստանը զբաղեցնում է 33 տեղը): Դրանով հանդերձ, սակայն, այս տարի էական հետընթաց է արձանագրվել գործարար այցելությունների ընթացքում հարակից զբոսաշրջային ծառայությունների առաջարկի մասով (31-ից 61-րդ տեղ):

Աշխատաշուկայի ձկունությունը (աշխատակիցների աշխատանքի ընդունման եւ ազատման դյուրինությունը) շարունակում է բարձր պահել մարդկային ռեսուրսների օգտագործման գծով մրցունակությունը, այսուհանդերձ լուրջ խնդիր է մնում աշխատուժի կրթման և զարգացման ենթակառուցվածքը: Մի կողմից կրթական հաստատությունները չեն կարող ապահովել համապատասխան որակավորմամբ մասնագետներ (կրթական համակարգի որակով Հայաստանը զբաղեցնում է 115-րդ, իսկ վերապատրաստման և հետազոտական ծառայությունների հասանելիությամբ 124-րդ տեղերը), մյուս կողմից ընկերություններն իրենք բավարար ներդրումներ չեն կատարում աշխատակիցների վերապատրաստման համար (աշխատակիցների վերապատրաստման մակարդակով Հայաստանը զբաղեցնում է 116-րդ տեղը):

**Հայաստանի դիրքը համեմատած Արեւելյան Եվրոպայի, ԱՊՀ եւ Միջին Արեւելքի համադրելի երկրների հետ**

Հայաստանի արդյունքերի վերլուծությունը մատնանշում է այն ոլորտները, որոնց վրա մեծ ուշադրություն պետք է դարձնել: Սակայն թե այդ նույն երեւույթները որքանով են հրատապ բնույթ կրում, կարելի է գնահատել Հայաստանի դիրքերը համեմատելով այլ երկրների հետ, մասնավորապես, համադրելի համարվող երկրների հետ: Որպես այդպիսի երկրներ են դիտարկվել Արեւելյան Եվրոպայի, ԱՊՀ եւ Միջին Արեւելքի երկրները:

**Զբոսաշրջության մրցունակության համաթիվը համադրելի երկրներում**

Երկիրը	Համաթվի արժեքը	Զբաղեցրած տեղը (139 երկրների շարքում)
Էստոնիա	4.88	25
Չեխիա	4.77	31
Սլովենիա	4.64	33
Հունգարիա	4.54	38
Լիտվա	4.36	51
Սլովակիա	4.35	54
Լատվիա	4.34	55
Ռումինիա	4.17	63
Մակեդոնիա	3.96	76
ՌԴ	4.23	59
Վրաստան	3.98	73
Ադրբեջան	3.85	83
Ուկրաինա	3.83	85
Ղազախստան	3.70	93
Մոլդովա	3.60	99
Դրոզդստան	3.45	107
Տաջիկստան	3.34	118
Իսրայել	4.41	46
Թուրքիա	4.37	50
Հորդանան	4.14	64
Սիրիա	3.49	105
Հայաստան	3.77	90

2011 թ.-ին այս երկրների խմբում ամենամրցունակ երկիրը Էստոնիան է՝ առաջ անցնելով անցած տարվա առաջատար Չեխիայից: Հայաստանը զիջում է Արեւելյան Եվրոպայի եւ Միջին Արեւելքի բոլոր երկրներին (բացառությամբ Սիրիայից): ԱՊՀ երկրների թվում Հայաստանը գրավել է 5-րդ տեղը՝ զիջելով Ռուսաստանին (59), Վրաստանին (73), Ադրբեջանին (83) եւ Ուկրաինային (85):

**Ջրոսաշրջության կանոնակարգող դաշտ**

Ըստ զբոսաշրջության կանոնակարգող դաշտի ենթահամաթվի Արեւելյան Եվրոպայի առաջատարը Էստոնիան է, որին հետեւում են Հունգարիան եւ Չեխիան: Հայաստանը հետ է մնում այս տարածաշրջանի բոլոր երկրներից: ԱՊՀ տարածաշրջանում Հայաստանը զիջում է միայն Վրաստանին: Միջին Արեւելքի երկրների Հայաստանն առաջ է Սիրիայից եւ Թուրքիայից:

**Ջրոսաշրջության կանոնակարգող դաշտ**

Երկիրը	Համաթվի արժեքը	Ջրադեցրած տեղը (139 երկրների շարքում)
Էստոնիա	5.5	17
Հունգարիա	5.29	24
Չեխիա	5.26	26
Սլովենիա	5.19	29
Լիտվա	5.14	33
Լատվիա	5.07	38
Սլովակիա	5.05	39
Ռումինիա	4.85	51
Մակեդոնիա	4.78	56
Վրաստան	5.11	35
Ադրբեջան	4.72	59
Ռուսաստան	4.63	64
Ղազախստան	4.59	65
Մոլդովա	4.57	68
Տաջիկստան	4.28	88
ՌԴ	4.23	73
Ղրղզստան	4.21	95
Հորդանան	5.08	37
Իսրայել	5.04	41
Թուրքիա	4.58	66
Սիրիա	4.17	101
Հայաստան	4.75	58

**Ջրոսաշրջության բիզնես միջավայր եւ ենթակառուցվածք**

Ըստ զբոսաշրջության բիզնես միջավայր եւ ենթակառուցվածք ենթահամաթվի` Հայաստանը բավականին թույլ դիրքեր է զբաղեցնում` 100-րդ տեղը` մեծապես զիջելով Արեւելյան Եվրոպայի երկրներին եւ Միջին Արեւելքի տարածաշրջանի երկրներին (բացառությամբ Սիրիայի): ԱՊՀ երկրների շարքում Հայաստանը գերազանցում է միայն Տաջիկստանին եւ Ղրղզստանին: Արեւելյան Եվրոպայի երկրների շարքում առաջատարը Էստոնիան է, ինչը պայմանավորված է հիմնականում զբոսաշրջության, ՏՀՏ եւ վերգետնյա տրանսպորտի ենթակառուցվածքների զարգացվածության մակարդակով: ԱՊՀ երկրների շարքում առաջատար դիրքեր են զբաղեցնում Ռուսաստանը, Ռուսաստանը, Ադրբեջանը: Իսրայելն առաջատար դիրքերում է Միջին Արեւելքի երկրների շարքում, մասնավորապես զարգացած ՏՀՏ ենթակառուցվածքի շնորհիվ:

**Ջրոսաշրջության բիզնես միջավայր եւ ենթակառուցվածք**

Երկիրը	Համաթվի արժեքը	Ջբաղեցրած տեղը (139 երկրների շարքում)
Էստոնիա	5.09	19
Սլովենիա	4.7	33
Չեխիա	4.56	37
Լատվիա	4.36	39
Հունգարիա	4.28	45
Լիտվա	4.21	46
Սլովակիա	3.96	57
Ռումինիա	3.8	66
Մակեդոնիա	3.49	78
ՌԴ	4.07	53
Ուկրաինա	3.53	76
Ադրբեջան	3.33	87
Ղազախստան	3.32	88
Վրաստան	3.21	94
Մոլդովա	3.11	98
Տաջիկստան	2.6	130
Ղրղստան	2.59	132
Իսրայել	4.33	42
Թուրքիա	4.02	55
Հորդանան	3.61	72
Սիրիա	2.91	109
Հայաստան	3.09	100

**Ջրոսաշրջության մարդկային, մշակութային եւ բնական ռեսուրսներ**

Ըստ զբոսաշրջության մարդկային, մշակութային եւ բնական ռեսուրսներ համաթվի Արեւելյան Եվրոպայի առաջատարը Չեխիան է՝ տիրապետելով մշակութային եւ բնական հարուստ ռեսուրսների: Հայաստանը կրկին զիջում է այս տարածաշրջանի բոլոր երկրներին: ԱՊՀ երկրների շարքում Հայաստանը զիջում է Ռուսաստանին, Վրաստանին, Ղրղստանին եւ Ադրբեջանին: Միջին Արեւելքում Հայաստանը հետ է մնում տարածաշրջանի բոլոր երկրներից (բացառությամբ Սիրիայի):

**Ջրոսաշրջության մարդկային, մշակութային եւ բնական ռեսուրսներ**

Երկիրը	Համաթվի արժեքը	Ջբաղեցրած տեղը (139 երկրների շարքում)
Չեխիա	4.48	31
Հունգարիա	4.06	48
Էստոնիա	4.06	50
Սլովակիա	4.04	52
Սլովենիա	4.03	53

Ուումինիա	3.84	66
Լատվիա	3.66	83
Լիտվա	3.66	85
Մակեդոնիա	3.62	93
ՌԴ	4.15	45
Վրաստան	3.62	92
Ղրզստան	3.54	100
Ադրբեջան	3.49	105
Ուկրաինա	3.33	118
Ղազախստան	3.19	123
Տաջիկստան	3.13	128
Մոլդովա	3.12	129
Թուրքիա	4.5	28
Իսրայել	3.87	65
Հորդանան	3.73	74
Սիրիա	3.39	113
Հայաստան	3.47	107

### Զբոսաշրջության մրցունակության զեկույցի մասին

Զբոսաշրջության համաշխարհային մրցունակության զեկույցը առաջին անգամ տպագրվել է 2007թ-ի մարտի 1-ին Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից (ՀՏՖ): ՀՏՖ-ը երկրների զբոսաշրջության մրցունակությունը գնահատելու նպատակով մշակել է Զբոսաշրջության մրցունակության համաթիվը: Այն բազմաչափ վերլուծություն է երկրի՝ որպես զբոսաշրջության կենտրոնի, համեմատական ուժեղ և թույլ կողմերը գնահատելու տեսանկյունից: Համաթվի հաշվարկման ժամանակ օգտագործվել են զբոսաշրջության ոլորտի ամենահամապարփակ տվյալների հենքերը՝ ինչպես «կոշտ տվյալներ» (WTTC; UNWTO), այնպես էլ հարցումների միջոցով ստացված տվյալներ: Ձեկույցի պատրաստման գործին աջակցում են գործընկեր կազմակերպությունները՝ Booz Allen Hamilton, IATA, UNWTO, WTTC, և գործընկեր ինստիտուտների (հետազոտական) համաշխարհային ցանցը: Հայաստանում ՀՏՖ-ի գործընկեր կազմակերպությունն է հանդիսանում «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը:

### «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն (EV)

«Տնտեսություն և արժեքներ»-ը մրցունակությունն ուսումնասիրող մտավոր կենտրոն է, որը ձգտում է ներմուծել զարգացման նոր հայեցակարգեր բարձրակարգ միջազգային կապերի, լավագույն որակավորում ունեցող վերլուծաբանների և խորհրդատուների ցանցի միջոցով: «Տնտեսություն և արժեքներ»-ը, լինելով Համաշխարհային տնտեսական ֆորումի գործընկեր, հրատարակում է ազգային մրցունակության ամենամյա զեկույցը:

Ի-Վի Քոնսալթինգ ՓԲԸ «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնի բիզնես խորհրդատվական կառույցն է, որը գործարար խորհրդատվական և ֆինանսական միջնորդի ծառայություններ է մատուցում նորարարության և մրցունակության ձգտող կազմակերպություններին: